ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 4-ին, հինգշաբթի.—Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովպայ.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Հուլիսի 5-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունն արշավի է մեկնում Ամբերդ:

*
* *

Հուլիսի 7-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան. Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Ներսես քհն. Ճեպեճյանը:

Ս. Պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 9-ին, երեքշաբթի.—Այսօր Եգիպտոսից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Զավեն եպս. Չինչինյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո սրբազան հայրը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Հուլիսի 14-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Վրթանես քհն. Գալայճյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 21-ին, կիրակի.—Վարդավառ. Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, օրվա հանդիսավոր առիթով, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Զավեն եպս. Չինչինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Համբարձի զմեզ Տէր աւելի քան զգալի թափորական զլեառն յերկնաբերձ եւ իմանալի խորանն» բնաբանով:

*
* *

Հուլիսի 22-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գուրգեն քհն. Աշուրյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Նույն օրը ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Հմայակ ծ. վրդ. Ինդոյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը

կատարելուց հետո հայր սուրբը Վեհարանում աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

*
* *

Հուլիսի 28-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 1-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգեվոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Օգոստոսի 4-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 5-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնում է Կիսլովոդսկ՝ հանգստանալու տեղի «Կրասնի կամեն» առողջարանում:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

*
* *

Օգոստոսի 11-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Վարդավառի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

*
* *

Օգոստոսի 18-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Այսօր, օրվա հանդիսավոր ատիթով, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 25-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վերափոխման.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Նույն օրը ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Հմայակ ծ. վրդ. Ինդոյանը:

*
* *

Օգոստոսի 30-ին, ուրբաթ.—Այսօր Կիսլովոդսկից Մայր Աթոռ է ժամանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը: